



5. ԽԱՌԱՆԿՈՒՆՍ ԳՅԵՂԻ ՆԱԽՐՈՐԹԻ ԱԽԶԻԿ

Թակավորի լաճ խետ ուր ախալըրգյոին խընդրանց գանցին կան գանլու, ուր խամար կնիկըմ կընդեր, պիրեր:

Գանցին մեկ գյեղըմ, հանխարի վերեն նստան, ախալըկներ էկան ճուր տանելի:

Ախալըկներու խառցնեցին, ասին. - Էսա գյեղ ի՞նչ գյեղ ա:

Ասին՝ խառանկունս:

Վերջ՝ ախալիկ մ'էկավ: Տեսան, օր շատ խորոտ ախալիկ էր, թակավորի տըղի աչք ինգանվ հինե:

Խառցուց. - Վի՞ր ախալիկն ես:

Ասաց. - Խառանկունսա նախրորթի ախալիկն եմ:

Գանցին նախրորթի տուն, ախալըկեն ուզեցին:

Նախրորթ շատ ուրախացավ, ասաց. - Շա՛տ աղեկ, հանվելի աղեկ, օր թակավորի տըղեն էղի ծի փեսա:

Ախալըկեն ասաց. - Թակավորի տըղեն քյե կուզան:

Ախալիկն ասաց. - Թի արիեստ ունի ծեռ, կառիմ, թի չէ, վո՛վ կէլնի, թըխ էղնի, չե՛մ առի:

Տանցան, գանցին տուն: Թակավորին պատմեցին:

Լաճուն էտի արիեստի, կարպետ գյործել սովրանվ:

Ախալիկ էպե, փըսակեց տըղայի վերեն:

Թակավոր մեռավ, տըղեն նստավ թակավոր:

Շատ, քիչ նստավ, օրըմ կընգան ասաց. - Կնի՛կ, արի՛ նստի՛ իմ տեղ թակավոր, ես մեկ էրթամ աշխարթյ կան գանմ, խեմ՝ ինչպե՛ս ա ախալին, ինչպես չի:

Կնիկ նստավ, էնոր տեղ թակավորեց, ինքն էլավ, գլոնաց
էնոր տեղ կան էկավ:

Օրըմ հուրուշ քանաք չարսու մեչ կան կը գա, ջրիուղներ կը
պըռնեն, կը տանին: Էնոնց քանքի էն կողմ էնպես պանցր քարըմ
կա, օր անհաշիվ ա: Էտա քարի գլըլիխ ակնունք, ալմաստ, ջա-
վահիր կը կընդլվի, օր ոչ ոք չըկանա էտա քարի գլըլիխ պանց-
րանա, օր էտա քարեր պերա:

Ջրիուղներ մըտածած ան, թե ի՞նչ կերպ կընդընինք, օր
էտա ալմաստ քարեր պերինք:

Կը պերեն, եզըմ կը քլըրթեն, կը խանեն տիկ, թակավորի
տըղին կը մըտուցեն մեչ էտա տըկին, տիկ լավ կը փըչեն, պերան
կապեն:

Էտա քարի գլըլիխ էրկու սինամանիսավքու պուն կա: Էն ժա-
մանակ խավքեր կը տեսին, օր լեշըմ կա քարի գլըլիխ, կեճին,
ըգտիկ կը վիրուցեն քարի գլըլիխ:

Տիկ օր տարած քարի գլըլիխ, կտցով օր զարկին, տիկ
ճըղվավ:

Թակավորի տըղեն տուս էլավ: Խավքեր թըռան, ինքն մը-
նաց քարի գլըլիխ մեքու, ոնչ ճամբախ կա՝ իճի, ոչ թու չարա կա:

Էտոնք տըկեն կը կանչեն, կասեն. - Էտա ակնունքներ, ջա-
վահիրներ թա՛լ, թըխ գան, օր մենք քե ինչըխ խաներ ենք, էլման
էճուցենք:

Եփ օր ակնունքներու հետև կան կը գա, կը տեսի՝ մեկ
աղվըսի պունի պես պա՛մ կա, հըլին հիսնի գլըլիխ ա, ոտ ա, ժեռ
ա: Օր էնքան մարթու խապած ան, խանած քարի գլըլիխ:

Թակավորի տըղեն մըտածեց, ասաց. «Էսքան մարթեր էկած
ան ըստա, մեռած ան, ես էլ տը մեռիմ, էլ հի՛ւր ակնունք թալեմ
տակ, էնոնք գանգընման»:

Օր, մ՛երկու մընաց քարի գլըլիխ, չեթալ, էնոնք թողին,
գանցին:

Շատ, քիչ մընաց, չե՞ ցուրտ էր, ինքն էլ գլընաց, մըտավ
աղվըսու պընան մեչ, օր չըմըսեր:

Գյիշեր տեսավ, օր կըռթկըռթոց կը գա: Իշկեց, տեսավ, օր
աղվիս էկե, էտա լեշերու օսկոռ կը կրծա:

Ասաց. - Ջա՛նըմ, էսա աղվիս հալքաթ աշխըրքից ա էկե, էսա
տեղ լեշ կուտա:

Առավոտուն էլավ, ինգնավ էտա աղվըսու ծակի խետ ու գը-
նաց փորու վերեն:

Գըննաց գըլխըվեր, գըննաց, գըննաց, գըննաց, մեկ տեղըմ
վե՛ քնդըյից գնտն, տուս էլավ:

Էկավ մըջ քնդըյին:

Ասաց. - Ես թակավորն եմ, կանեքյ, տուքյ շատ անմեղներ
պերեր եքյ, խաներ քնրի գըլիխ, սպաներ եքյ: Ծե հըմենիտ սըրի
տը քնշեմ:

Գըննաց էն մեկէլ փողան կան էկավ, մեկ էլ էն ջըհուղներուն
ռաստ էկավ: Ջըհուղներ պըռնեցին, տարան: Տարան, լճուցին մեկ
գյետնափոր մաղարի՛մ մեջ:

Տեսավ օր ի՞նչ՝ կան քսան, եռսուն խոգյի, հըմեն պըռված,
գո՞ դն են:

Թակավոր խառցուց, ասաց. - Մարթե՛ր, տու ըստա ի՞նչ
կենեքյ, ծե ի՞նչ ա էղե:

Կեսն ասին. - Մե թնգն հէսօր պըռնած են, պերած են, չենքյ
գիտի ի՞նչ խընթիր ա:

Մեկ էնդեխեն ասաց. - Յե՛յ, մարթ, ի՞նչ կը խառցնիս, էնի օր
արիեստավոր ա, արթեն էսա տեղ արիեստ կենա, էնոր պնն չեն
ասի, չուր ժանանակին խի ի՞նչըլխ կէղի: Էնի, օր արիեստավոր չի,
կը տանեն, կը մըտուցեն տըկի մեջ, խավքեր էնի կը խանեն քնրի
գըլիխ:

Ասաց. - Տու ընչի՞ց գյինաս, թի կը խանեն քնրի գըլիխ:

Ասաց. - Մեկ մարթըմ պըռնած են, տարած քնրի տակ, օր
խավքեր խանեն վեր: Խավքեր զէնի խանած են քնրի գըլիխ,
խավքերուն ի՞նչ կըլնի, էտա տիկ չըն պատռե, կերթան, տիկ կը
մընա էտա տեղ: Կարիք խավքեր կը գնն էնտեղից ընցնելու, լեշ
քնրի գըլիխ կը տեսին, կէճին վերին, էնտուց կառին, կերթան
հուրուշ սարըմ, էնտեղ կուտեն: Տիկ խե պատռելուն մարթըն կէլի
տուս, խավքեր կը փախեն, մարթն կէլի, կը գն: Կը գն, էլման
ջըհուղներուն կը պատահի, էնի կը պըռնեն, պերեն ըստա: Էնի ծի
կը պատմեր: Յիմա քյե օր պիրած են ըստեղ, օր տու մեկ ար-
իեստ չըգյիտնաս, քյե կը խանեն քնրի գըլիխ, օր ակնունքյ, ջն-
վաիր պերես տակ:

Քիչ վեր՞ ջըհուղներ կը գնն, կը խառցընին. - Տու ո՞ր մեկ
արիեստավոր եքյ:

Թակավոր կասա. - Ես արհեստավոր եմ:

Կասեմ. - Քու արհեստ ի՞նչ ա:

Կասա. - Իմ արհեստ կարպետ, խալի, խուռջի շինել ա:

Լե թակավորու տղըն կասա. - Իմ շինածին էսա քաղքյի մեչ գյին չեն կանա տա, թակավորի թախթի քաղաքյն էղի, օր գյին էն ա: Խատին հիսուն օսկի, խարիր օսկի կը տան:

Եփ օր ժամանակե՛մ վերճ մեկ խատ կը շինա, կարպըտի պըռկըներ էնու ի՛նչ գալ գըլիխ, ո՛ր տեղ մընալ, կը գըլրա թելով:

Ջըհուղներ կը տանեն ուրենց քաղքյի մեչ, խարիր, էրկու խարիր կուռուշ կը տան կարպետին:

Էն մեկ ջըհուղ կասա. - Տանենք թակավորական քաղաքյ, օր մեկ խատ խարիր, խարիր հիսուն օսկի տան:

Կառին, կէրթան էտոնց մայրաքաղաքյ:

Կը տանին, չարսու մեչ էնի օր կը ծախա, մուշթերիք կը գան, կը խին օր առին, կը խին, օր թակավորի անուն գըլխագանլած՝ գըլրուկ ա չորս պիլիր:

Կասա. - Ջանըմ, մեր թակավոր դո՞ր ա գացե, պըռվե գյերի:

Փոլխ կոմսարներուն կասեն: Փոլխներ կառին, կը տանին էտոնց թակավորի սարեն:

Թակավորի ծառաներ գացին, թակուհուն ասին: Թակուհին էկավ, տեսավ, հիմացավ:

Էլ՛ավ, չորս-խինգ թաբուռ գորք առեց, ըզկարպետու պերողն էլ խետ առեց, գըլնաց յալլա՝ խընդ ջըհուղներու քաղաքյ:

- Դե՛, մարթ, էսա մարթ ո՞ր տեղն ա:

Ջըհուղ տեղ շանց էտու:

Թակավորի կին մըտավ ներս, տեսավ օղորթ՝ ուր մարթ գի էնդեն ա:

Ամբողջին տուս էխան: Չըրաման էրաց՝ գորք ըզջըհուղներ հըմեն քաշեցին սուր:

Տանցան, էկան էնոնց տուն:

